ԴԱՍԱԿԻ ՀԵՆԱԿԵՏԻ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

(Հատուկ ռազմական օպերացիայի ուսումնասիրության փորձից)

Կրակակետերի կազմակերպումը դասական տեսքով՝ միասնական խրամուղիով և խրամաբջիջներով, դատապարտված են հակառակորդի անընդհատ գնդակոծմանը, ինչը հանգեցնելու է անձնակազմի կորստին։ Ուստի նպատակահարմար է դասակի հենակետը սարքավորել մի փոքր այլ կերպ։

ԴԱՍԱԿԻ ՀԵՆԱԿԵՏԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄԸ «ՍԱՆՐԱՃԵՎ» ԿԱՄ «ՀՈՎՀԱՐԱՃԵՎ» ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐՈՎ

«Սանրաձև» տարբերակը նման է դասական խրամուղու սարքավորմանը, սակայն տարբերվում է նրանով, որ խրամաբջիջները հիմնական խրամուղու համեմատ շատ ավելի առաջ են փորվում, իսկ հիմնական խրամուղին գտնվում է հակառակորդի կողմից չդիտարկվող գոտում կամ հակառակ լանջին: Այս տարբերակում դիրքում գտնվող մարտիկները հնարավորություն ունեն արագ դուրս գալ հակառակորդի կրակի տակից դեպի հիմնական խրամուղի՝ ունենալով իրենց անհատական հաղորդակցության անցատեղը (Նկ.1):

Հաջորդը՝ «հովհարաձև» տարբերակն է, որը ենթադրում է առաջ քաշված սլաքատիպ խրամաբջիջներ: Վերջիններս ունեն պահեստավորված մարտական լրակազմին (ՄԼ) կամ առաջին բուժօգնության կետին արագ հասանելիության անհատական հաղորդակցության անցատեղերի հնարավորություն, ինչը ապահովում է ՄԼ-ի առաքման և վիրավորների տարհանման առավելագույն արագություն (Նկ.2):

Պահեստավորված ՄԼ-ի արագ հասանելի տեղերը

Հիմք ընդունելով այն փաստը, որ հակառակորդը կիրառելու է FPV դրոններ, ինչպես նաև տարատեսակ զինամթերք արտանետումներ կատարելու ունակ քվադրոկոպտերներ, անհրաժեշտություն է առաջանում ՄԼ պահպանման տեղերը (պահեստավորումը) իրականացնել տարանջատման սկզբունքով:

Խորհուրդ է տրվում պահեստավորումը կազմակերպել մի քանի վայրերում կամ ըստ ՄԼ տեսակներով, կամ ունենալ պահման հիմնական ու արագ հասանելիության կետեր:

Պահման հիմնական կետը պետք է լինի առավելագույն պաշտպանված և հիմնական դիրքից հեռու: Որպես կանոն, այն տեղակայվում է օժանդակ ուժերի հաշվարկների բազավորման վայրում:

Արագ հասանելիության կետը պետք է տեղադրվի այնպես, որ այն գտնվի հրաձգային խրամաբջիջների անմիջական հարևանությամբ և ցանկալի է դրանցից հավասար հեռավորության վրա:

ՄԼ արագ հասանելիության կետում անհրաժեշտ է նշանակել հերթապահ, ով հսկելու է ծախսված զինամթերքի համալրմանը և բերված փաթեթների բացմանը:

Բերված զինամթերքը պետք է բացվի և հանվի «ցինկերից», ազատվի թղթե փաթեթավորումից և տեսակավորվի ավելի լայն տարաների մեջ՝ պահեստատուփերում կամ ժապավեններում արագ լիցքավորելու համար:

ՄԼ արագ հասանելիության կետում պետք է տեղադրվի նաև գնդացիրների ժապավենները լիցքավորելու հատուկ սարքը:

Հիանալի լուծում կլինի, եթե ստորաբաժանումում, որպես պարտադիր կանոն համարվի հետևյալը. մարտիկները պետք է առանց շտապելու բացեն «ցինկերը», որպեսզի վերին կափարիչը ամբողջությամբ առանձնանա և չծալվի: Ապագայում այս «ցինկերը» կարող են լցվել հողով և օգտագործվել որպես «աղյուսներ»՝ դիրքերը կահավորելու համար:

Նկ.1. Դասակի «սանրաձև» հենակետի գծապատկեր



1 - Սանհանգույց

2 / 3 / 4 / 6 – Հրաձգային խրամաբջիջներ

5 - Հրամանատարական դիտակետ (ՀԴԿ)

7 – Էներգաապահովման գետնահյուղ

8 – Հանգստի / վիրավորների տեղ

9 - Պահեստավորված ՄԼ-ի արագ հասանելի տեղ

ՄՀվ / ՄՀդ / ՄՀջ օղակի հետիոտնացված հետևակի պաշտպանական բնագիծ

ՄՀդ-ի ՀԴԿ

ՊԿՄ

Նկ.2. Դասակի «հովհարաձև» հենակետի գծապատկեր



1 / 2 / 3 / 5 - Հրաձգային խրամաբջիջներ

4 / 11 – Սանհանգույցի տեղեր

6 / 8 – Հանգստի / վիրավորների տեղեր

7 - էներգաապահովման գետնահյուղ

9 – Պահեստավորված ՄԼ-ի արագ հասանելի տեղ

10 - Հրամանատարական դիտակետ (ՀԴԿ)

ՄՀվ / ՄՀդ / ՄՀջ օղակի հետիոտնացված հետևակի պաշտպանական բնագիծ

ՄՀդ-ի ՀԴԿ

ՊԿՄ